**840. ԽԱՉՔԱՐ,** *գեղաքանդակ, լայն ճակատով, որի կենտրոնում քանդակված է թևատարած արծիվ. գտնվում է գյուղամիջի ս. Աստվածածին եկեղեցու բակում. արծվի շուրջը 4 տող.*



ՄԲ. [ԽԱՉՍ] ԲԱՐԵԽԱՒՍ Մ[ԱՐԳԱՐԻՆ.

Ծանոթ. *Ըստ քանդակների ոճի XVI դար։*

**841. ԽԱՉՔԱՐ,** *նախորդի մոտ, հյուսիսից, քիվին 1 տող.*



ՄԲ. ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ ՂՈՒԼԻՆ.
Թվ. :ՌԺԶ: (1567):

Ծանոթ. *Անձնանունը կարելի է և այլ կերպ վերծանել։*

## ԱՂԱՄԽԱՆ

*Գյուղի հին անունն անհայտ է։*

*Այս գյուղից հավաքած մեր ժողովածուի արձանագրությունները երկու վայրից են.*

*Ա. Գյուղամիջի ս. Աստվածածին ոչ հին եկեղեցու պատերի մեջ ագուցված խաչքարերի վրայից և նույն եկեղեցու պարսպապատ բակում եղած խաչքարերի և տապանաքարերի վրայից։*

*Բ. Գյուղի հարավ-արևմտյան եզրին գտնվող ս. Սարգիս կիսավեր մատուռի բակի հուշարձանների վրայից։*

*Մեր ժողովածուի մեջ ամփոփված 18 արձանագրություններից միայն երկուսն են նախկինում հրատարակված եղել։*

**842. ԽԱՉՔԱՐ,** *գեղաքանդակ, ագուցված է եկեղեցու բեմի հյուսիսային պատի մեջ, ներքուստ, քիվին 1 տող.*



ՄԲ. ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ ԱՌԱԾ ՎԱՐԴԻԿԻՆ. Թվ. :ՋԿԷ:(1518):

**843. ԽԱՉՔԱՐ,** *գեղաքանդակ, ագուցված է եկեղեցու բեմի հյուսիսային պատի մեջ, շրջանակների տարբեր մասում 2 տող.*



Թվ. [Ա]ԿԱՆԻՆ :ՋՁԸ: (1539).
[Ա]ՆԱՑԽԱԹՈՒՆԻՆ, ...ՄԱՐԳԱՐԻՆ, ՆԱՆԻՆ։

**844. ԽԱՉՔԱՐ,** *գեղաքանդակ, ագուցված է եկեղեցու բեմի հարավային պատի մեջ. շրջանակների տարբեր մասում 1 տող.*



Թվ. :ՋՁԸ: (1539):

**845. ԽԱՉՔԱՐ,** *գեղաքանդակ, ագուցված է եկեղեցու բեմի հյուսիսային պատի մեջ, քիվին և տարբեր մասում 2 տող.*



...[ԵՍ] ԹԱՂԷՆ ԿԱՆԿ[Ն]ԵՑԻ ԽԱՉՍ ՀԱՒՐ ԻՄ ՇԱՀՈՒՄԻՆ. Թվ. :ՋՂԳ: (1544):

ՆԻԵՂԵՑՈՒ ՇՐՋԱՊԱՏԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ

**846. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *օրորոցաձև, շրջանակլին և արևմտյան ճակատին 2 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏՋԱՀՐԱՊԻՆՈՐՄԱՏԻՐՈՍԱՑԱՒՍԷՐՔՍ

ԹՌԻԵ·

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՋԱՒՀՐԱՊԻՆ ՈՐ ՄԱՐՏԻՐՈՍԱՑԱՒ [Ի] ՍԷՐ ՔՐԻՍՏՈՍԻ:
|Թ[Վ]. ՌԻԵ: (1576):

*Հրատ. Սմբատյանց, 508, Լալայան, XVIII 139:*

**847. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *սեղանակերպ, հյուսիսային երեսին կենցաղային քանդակներ և վերևի շրջանակին 1 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏ:ՍԷՎԱՆՏՈՒԿԻՆ:ԹՎՆ:ՌԾ:

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՍԷՎԱՆՏՈՒԿԻՆ. ԹՎ. :ՌԾ: (1601):

**848. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *օրորոցաձև, եկեղեցու բակի գերեզմանատան մեջ. հյուսիսային կողին կենցաղային տեսարան և շրջանակներին 2 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏԲԱՂՏԱՍԱՐԻՆ·····
ԴԱԶԱՐԻՆ:ԹՎ:ՌԾԱ:

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԲԱՂՏԱՍԱՐԻՆ.....
|ԴԱԶԱՐԻՆ. ԹՎ. :ՌԾԱ: (1602):

**849. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *օրորոցաձև, հարավային երեսի շրջանակներին 3 տող.*

ԹՎՌՃԼԳ
ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏԳԻՐԻԿՈՐՈՐԴ
ԻԱՂԱՍԻՆ

ԹՎ. :ՌՃԼԳ: (1684)|. ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԳԻՐԻԿՈՐ[Ի]Ն[Ի], ՈՐԴ|Ի ԱՂԱՍԻՆ:

**850. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *օրորոցաձև, հարավային երեսին կենցաղային քանդակներ և շրջանակներին 3 տող.*

ՈՒԽԱՉՍԲԱՐԵԽԱ
ՒՍԱՂԱՍԻՆՈՐԴԻԱՍԾԱՑՏՐԻՆԹՎ
ՌՃԾԳ

ՈՒ. ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒ|Ս ԱՂԱՍԻՆ, ՈՐԴԻ ԱՍԾԱՑՏՐԻՆ. ԹՎ. :ՌՃԾԳ: (1704):

Լուսանկ. 172

**851. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *օրորոցաձև, շրջանակին 2 տող։*



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՌԷԻՍԱՋԻՆ.|
ԹՎ. :ՌՃԻ: (1671):

**852. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *տափակ, երեսին 4 տող.*



ԱՅՍ Է ՀԱՆ|ԳԻՍՏ ԱՍԱՑ|ՏՈՒՐԻՆ.
ԹՎ.| :ՌՃԼԳ: (1684):

**853. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *տափակ, մեծ, երեսին 4 տող.*



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ |ՄԱՐԵԱՆԻՆ, ԿՈՂԱ|ԿԻՑ
ՈՒԼՈՒՆԽԱՆ|ԻՆ ԹՎ. :ՌՃԾԵ: (1706):

**854. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *տափակ, երեսին 6 տող.*



ԱՅՍ Է| ՀԱՆԳ|ԻՍՏ ՄԱ|ՆՍԱՆԻՆ|
ԹՎ. :ՌՃԼԶ: (1687):

**855. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *մեծ, տափակ, երեսին գավազան և 2 տող.*



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՏՐ. ԱԼԵՔՍԱՆԻՆ.
|ԹՎ. :ՌՃԿ: (1711):

**856. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *օրորոցաձև, հյուսկածային երեսին կենցաղային տեսարան և շրջանակներին 2 տող.*



ՍԲ. ԽԱՉԱ ԲԱՐԷԽԱԻԱ| ԱԼԱՑ-
ԽԱՆԻՆ ՈՐԴԻ ՑՈՒԼԽԱՆԻՆ.
ԹՎ. :ՌՃԿԵ: (1716):

857. *ԽԱՉՔԱՐ, գեղաքանդակ, գտնվելիս է եղել եկեղեցու հարավում, այժմ չկա.*

Ես Միրզայ Մկրտիչ կանգնեցի վխաչս հաւրն մեր Աքանասին
թվին :ՋՂԳ: (1544):

*Հրատ. Սմբատյանց, 508։ Լալայան, XVIII, 139։*

Ս. ՍԱՐԳՍԻ ՇՐՋԱՊԱՏԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ

858. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև, հարավային երեսին կենցաղային անասարան, շրջանակին 1 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏԳՐԻԳՈՐԻՆՈՐԷՈՐԴԻՆՆԵՐՍԷՍԻՆԹՌԼ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԳՐԻԳՈՐԻՆ, ՈՐ Է ՈՐԴԻՆ ՆԵՐՍԷՍԻՆ. ԹՎ. :ՌԼ: (1581):

859. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, նախորդի նման և նրան մոտ հյուսիսից, հարավային երեսին խորաններ և դրանց գլխին 1 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏԳԱՍԲԱՐԻՆ ԹՌԼ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԳԱՍԲԱՐԻՆ. ԹՎ. :ՌԼ: (1581):

## ՄԱՐՏՈՒՆԻ (ԱՆՑՅԱԼՈՒՄ՝ ՆԵՐՔԻՆ ՂԱՐԱՆԼՈՒԽ. ՀՆՈՒՄ՝ ՆԵՐՔԻՆ ԿԶՆՈՒՏ)

*Գյուղի հնագույն անունն անհայտ է, աղբյուրներում, XVII դարից սկսած՝ նաև «Ջամբռի» մեջ հիշատակվում է Ներքին Կզնուտ անունով։ Գյուղամիջում այժմ արձանագրություններ ունեցող հուշարձանները գյուղամիջի ս. Աստվածածին եկեղեցին և նրա շուրջը տարածված գերեզմանատունն են։ Եկեղեցին գտնվում է գյուղի հարավային եզրին և շինված է ճեղքված քարերով. մեծ նորոգման է ենթարկվել Ալաշկերտի գաղթականների կողմից։ Սրա պատերի մեջ ագուցված են ավելի հին խաչքարեր և տապանաքարեր՝ ամենահինը՝ 1531 թ.։ Շրջապատի գերեզմանատան մեջ կան 4—5 խաչքարեր և բազմաթիվ տապանաքարեր, որոնցից հինն ունի 1551 թ.։ Այստեղ կարևոր են հատկապես եկեղեցու հարավում գտնվող տանուտերի հուշարձանները։*

*Սմբատյանցն ու Լալայանը հիշատակում են գյուղի հարավում մի ավերակ եկեղեցի ևս, որի մոտ եղել է խաչքար՝ Շմավոն եպիսկոպոսի անունը հիշող արձանագրությամբ, բայց մենք չկարողացանք գտնել այն։*

*Գյուղի մեջ, նրա արևմտյան մասում, կա մի ձիթհանք ավերակ, որի պատի մեջ և ներսում ընկած են երկու մնացված տապանաքարեր՝ ձևով հայկական, բայց արաբատառ արձանագրություններով։*

*Ավելի հին և մեծ թվով արձանագրություններ կան գյուղից 7—8 կիլոմետր հարավ, Սևլիմի լեռնանցքի բարձունքների տակ եղած ձորամիջի ավերակներում, որոնք ընդհանուր անունով կոչվում են* Մարտունու գոմեր: *Դա մի նեղ և երկար ձոր է, որն սկըսվում է վերին Ղարանլուխից քիչ վերև և թեքվում դեպի արևելք։ Ձորամիջում սկիզբ է առնում և հոսում Կզնուտ գետակը, այժմ այդ ձորը միայն արոտավայր և անասնագոմերի վայր է, բայց հնում այստեղ եղել են երեք գյուղեր, ավելի ճիշտ ագարակներ, որոնց ավերակները իրարից մոտ մեկ կիլոմետր հեռավորությամբ, տեղավորված են գետակի աջ ափին։ Ներքևից բարձրանալով՝ դրանցից առաջինի մեջ մնում են փոքր եկեղեցու և անների ավերակները միայն։*